ЦЕНТРАЛА
на
АРМЕНСКИЯ КОМИТЕТ
ПО РЕПАТРИАЦИЯТА
ՆԵՐԳԱՂԹԻ ԿԵԴՐ. ԿՈՄԻՏԵ
СОФИЯ, ул. Ниш № 31
Тел. 2-47-28

№ 78

ՍՈՖԻԱ 7/Մայիս 1946

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ս.Ս.Ռ. ի

ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՆԵՐԳԱՂԹՈՂ ՀԱՅԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ և ՏԵՂԱՎՈՐՄԱՆ

Կ Ո Մ Ի Տ Ե Ի

ՆԱԽԱԳԱՀ ԲԱԲԿԵՆ ԱՍՎԱԾԱՏՐՅԱՆ ին

Երևան

Հարգելի Նախագահ

Պուլկարահայերու Սովետական Հայաստան Ներգաղթի կազմակերպման Կոմիտես, ներգաղթի շուրջ մինչև այժմ իր կատարած աշխատանքներու մասին Ձեզ կներկայացնե սույն հակիրճ

Զ Ե Կ Ո Ւ Յ Ց ը

Համաձայն Ձեր 25/Դեկտեմբեր 1945 թվակիր նամակի կարգադրության, տեղվույս մեջ կազմվեցավ Ներգաղթի Կոմիտե, որը Պուլկարիո 19 /տասնը ինը /քաղաքներու մեջ ունի իր մասնաճյուղները:

Այս մասին մենք հեռագրեցինք Ձեզի 18/Փետրվար 1946 թվին և տվինք վերոհիշյալ Կոմիտեի անդամներու անունները. նույնը կրկնեցինք նաև մեր թիվ/: ԵՐԵՎԱՆ: Հառաջդիմական Միության Կեդրոնական Վարչության 114 18/Փետրվար թվակիր նամակով:/

Մեր 5/Մարտ 1946 թվակիր նամակով /Ներգաղթի Կոմիտե ի/ Ձեզի տեղեկացուցինք թե կհաստատենք մեր հեռագիրը Կոմիտեիս կազմի մասին, թե արձանագրությունները կշարունակվին և կնախատեսվին նվազագույն 12,000 ներգաղթողներ Պուլկարիայեն:

Ի պատասխան Ձեր 16/Ապրիլ 1946 թվակիր հեռագրին 19/Ապրիլին հեռագրեցինք Ձեզի թե փաստորեն մինչև այժմ արձանագրված ընտանիքներու թիվը կհասնի 3,182 ի, իսկ ընդամենը 11,318 անդամներով:

Սույն նամակով կտեղեկացնենք Ձեզ որ մինչև այժմ Սովետական Դեսպանատուն հանձնված են /Հայաստան դրկվելու համար/ Պուլկարահայ ներգաղթողներու հարցարանները հետևյալ թվականներուն և հետևյալ քանակությամբ:/Ընտանիք և անդամներ:/

Առաջին հանձնումը	22/Մարտին	2,212 ընտանիք	8,154 հոգի
Երկրորդ ,,	2/Ապրիլին	390 ,,	1,298 ,,
Երրորդ ,,	4/Ապրիլին	282 ,,	1,082 ,,
Չորրորդ ,,	16/Ապրիլին	282 ,,	777 ,,
Հինգերորդ ,,	7/Մայիսին	90 ,,	271 ,,
		3,256 ,,	11,582 ,,

Արձանագրությունները կշարունակվին:

Նյութական միջոցներու հարցը մենք բլանավորած ենք հետեվյալ կերպով,

ա/Ընթացիկ ծեռնարկներ :ԵՐԵՎԱՆ: Հառաջդիմական Միության ի նպաստ Ներզաղթի ֆոնտին

Բ/Հայ Բարեգործական Ընդհանուր Միության մասնակցությունը

գ/Պուլկարական պետական նպաստ

դ/Ընդհանուր հանգանակություն

ե/Մաս մը ազգապատկան կալվածներու վաճառում

:ԵՐԵՎԱՆ:ի ընթացիկ ծեռնարկները ի նպաստ Ներզաղթի Ֆոնտին ցարդ տվին 1,588,677 լեվայի հասույթ:Այս ծեռնարկները կշարունակվին անընդհատ:

Հ.Բ.Ը.Մ.յան Պուլկարիո Մասնաժողովը դիմում կատարեց իր Կեդրոնին որպեսզի Ամերիկայեն ուղարկվին ներզաղթող կարիքավոր ընտանիքներու համար հագուստեղեն ,կոշիկ,արհեստավորական գործիքներ և այլն:

Այս Միության վարիչ պատվիրակ պրն. Վ.Մալեզյան Նյույորքեն հեռագրով պատասխանեց թե պատրաստ են նման օժանդակություն ընելու, սակայն Ամերիկայեն Պուլկարիա փոխադրության համար միջոցներ կպակսին:

Մենք դիմում կատարեցինք Սոֆիայի Սովետական Դեսպանատան մոտ այս մասին ,որը տվավ նպաստավոր արդյունք: Այսօր Դեսպանատունեն մեզի հայտնեցին թե Մոսկվայեն Արտաքին Առեվտրի Մինիստրությունը հրահանգած է Ամերիկայի Սովետական Առեվտրական Ներկայացուցչության որպեսզի Սովետական շոգենավով կատարվի ապրանքներու փոխադրությունը մինչև Պուլկարական նավահանգիստ մը:Բացի ասկե ,որը կհուսանք թե զգալի օժանդակություն մը ըլլա, Հ,Բ.Ը.Մ.յան Պուլկարիո Մասնաժողովը Ներզաղթի Ֆոնտին պիտի մուծե 1,000,000 լեվայի գումար մը:

Նյութական հարցի ամենաէական մասն է սակայն Պուլկարիո պետական նպաստը,Ընդհանուր հանգանակությունը և մաս մը ազգապատկան կալվածներու վաճառումը:

Մենք հուսով ենք որ ,Պուլկար պետությունը Ներզաղթողներու փոխադրությունը մինչև պուլկարական նավահանգիստը պիտի կատարե պետական երկաթուղիներով անվճար:Նույնպես կհուսանք որ պետությունը պիտի հատկացնե զգալի գումար մը Ներզաղթի Ֆոնտին:Այս ուղղությամբ պատասխանատու պետական անձերու կարծիքները շոշափված ենք և պատճառ չունինք լավատես

46

հըլլալու:

Ընդհանուր հանգանակութիւնը որ պիտի կատարենք բոլոր պուլկարահայերէն կհուսանք թէ պիտի հասնի բավական զգալի գումարի մը:

Մաս մը ազգապատկան կալվածներու վաճառումէն նույնպես պիտի գոյանան զգալի գումարներ:

Պետական նպաստի կարգադրման, Ընդհանուր Հանգանակութեան և ազգապատկան կալվածներուն մեկ մասին վաճառմանտակավին չենք ձեռնարկած այն պատճառավ որ կգտնվինք անստույգ վիճակի մը մեջ: Բոլոր զեկուցումները որ կկատարենք Ձեզի կամ Սովետական Դեսպանատան կմնան անարձագանգ կամ առանց վճռական պատասխաններու: Իսկ վերոհիշյալ երեք գլխավոր ձեռնարկներուն բնույթը այնպիսին է որ չէ կարելի իրագործել զանոնք մինչև որ չունենանք Ձեր պարզ և մեկին հրահանգները ներգաղթի առաջին կարավաին Պուլկարիայեն մեկնելու թվականին մասին և ներգաղթողներու թվին մասին: Այդ տվյալները ունենալե հետո միայն կարելի է պահանջել թե պուլկար պետության օժանդակությունը, թե որոշել որ քաղաքներու ազգապատկան կալվածները պիտի վաճառվին և թե լավագույնս արդյունավորել ընդհանուր Հանգանակությունը:

Նկատի ունինք գոյացած գումարներուն մեկ մասը հատկացնել շինանյութի -գլխավորապես տախտակի գնման Ռումանիայեն:-

Ահա ձեռնարկներ որոնք կրնանք շատ կարճ ժամանակամիջոցի մը մեջ իրագործել եթե ունենանք Ձեր հրահանգները և դուրս գանք այժմու անստույգ կացութենեն :

Այս պատճառավ ալ անհամբեր, ամեն օր, կսպասենք Ձեր ներկայացուցիչին Պուլկարիա ժամանումին, որ այսքան կուշանա :

Եթե տակավին Ձեր ներկայացուցիչը չէ մեկնած, թախանձագին կխնդրենք որ անմիջապես հարկ եղածը ընեք որ իսկույն մեկնի :

Ամբողջ գաղութը անձկությամբ կսպասե անոր ժամանումին:

Սպասելոր Ձեր արագ կարգադրություններուն կխնդրենք Տյար Նախագահ, որ հաճիք ընդունիլ մեր խորին հարգանաց հավաստիքը:

ՆԵՐԳԱՂԹԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ-Պուլկարիայի-ԿՈՄԻՏԵ Ի

/...ԱԲՐՈՆԵԼՅԱՆ/

ЦЕНТРАЛА
СОФИЯ
...ЕНСКИ КОМИТЕТ по РЕПАТРИАЦИЯТА